

# **ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

## **ԱՆՁԻ ՊԱՏԿԻ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՄԲԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

### **ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

Ժամանակակից իրավական համակարգերի զարգացման կարևոր ուղղություններից մեկը մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ամրապնդումը և պաշտպանությունն է: Այդ իրավունքների մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում անձնական ոչ գույքային իրավունքները, որոնց համակողմանի պաշտպանության անհրաժեշտությունը բարձրացված է սահմանադրական մակարդակի: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, արժանապատվությունը համարելով մարդու իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 14), արգելում է առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել օրենքով չթույլատրված տեղեկություններ: Սահմանադրությունը հատուկ ընդգծում է, որ մարդու արժանապատվությունը հարգվում և պաշտպանվում է պետության կողմից, յուրաքանչյուր անձի վերապահում է իր պատիվն ու արժանապատվությունը ոտնձգությունից պաշտպանելու, իր մասին հավաքված ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 23): Սահմանադրությամբ նշված իրավունքների և դրանց պաշտպանության առանձնահատուկ ամրագրումը նշանակում է, որ ճյուղային նորմատիվ իրավական ակտերում դրանց իրականացումն ու պաշտպանությունը պետք է ստանան Սահմանադրության ոգուն և պահանջներին համապատասխան կանոնակարգում ու կոնկրետացում, և ոչ մի մարմին Սահմանադրության պահանջները շրջանցելու, Սահմանադրությամբ վերապահված իրավունքները սահմանափակելու իրավասություն չունի:

Մինչդեռ քաղաքացիական օրենսգրքի նորմերի վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ մարդու պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանության սահմանադրական իրավունքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխություններով ոչ միայն սահմանափակվել է, այլև որոշակի դեպքերում անձն ըստ էության զրկվել է դրանք օրինական ճանապարհով պաշտպանելու հնարավորությունից: Եթե մինչև 2010 թ. մայիսի 18-ը կատարված փոփոխությունները անձը կարող էր գոնե դատական կարգով իր պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը արատավորող տեղեկությունների հերքում պահանջել, ապա փոփոխություններից հետո այդ միջոցից լիարժեք օգտվելու հնարավորությունն էլ սահմանափակվեց, քանի որ ներկայումս հերքում

կարելի է պահանջել ոչ թե պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը նսենացնող տեղեկությունների տարածման բոլոր դեպքերում, այլ միայն հրապարակայնորեն վիրավորելու կամ հրապարակայնորեն զրպարտելու դեպքում: Բանն այն է, որ վիրավորանքի և զրպարտության համար քրեական պատասխանատվությունը վերացնելու հետևանքով 2010 թ. մայիսի 18 - ին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում (այսուհետ՝ Քաղ. օր.) կատարվեցին լրացումներ և փոփոխություններ, որոնց արդյունքում բարոյական վնասի հատուցում նախատեսելու փոխարեն քաղաքացիական օրենսգրքը ներմուծվեց պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը հրապարակային արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից պաշտպանելու իրավունք, և նախատեսվեց պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին պատճառված վնասի համար դրամական փոխհատուցում<sup>1</sup>: Բայց այդ փոփոխությունները և լրացումները բարոյական վնասի հատուցման պրոբլեմը լուծելու փոխարեն անհարկի սահմանափակեցին պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը պաշտպանելու հնարավորությունները, աղավաղեցին բարոյական վնասի բնույթն ու էությունը, աղճատեցին համընդհանուր ճանաչում գտած, օրենսդրորեն ամրագրված դասական հասկացությունները<sup>2</sup>: Սա այն դեպքերից մեկն է, երբ, ռուս փիլիսոփա Ա. Ա. Ջինովկի արտահայտությամբ, մարդկանց որոշակի խմբեր, պարզագույն ելակետային հասկացություններում խառնաշփոթ առաջացնելով, չհասկանալու բարդույթ և դժվարություններ են ստեղծում հասարակության այն խավերի մեջ, որոնք հարկադրված օգտվելու են այդ հասկացություններից<sup>3</sup>:

Քաղ. օր. 19 հոդվածի հին և նոր խմբագրությունների համեմատությունն ակնհայտ ցույց է տալիս, որ նոր խմբագրությամբ անհարկի սահմանափակվել են անձի՝ իր պատիվն ու արժանապատվությունը պաշտպանելու հնարավորությունները: Իսկ Քաղ. օր. 1087.1. և Քր. օր. 135, 136 հոդվածների համեմատությունից պարզվում է, որ աղճատվել են վիրավորանքի և զրպարտության հասկացությունները: Սասնավորապես, եթե Քաղ. օր. 19 հոդվածի նախկին խմբագրությամբ քաղաքացին իրավունք ուներ դատարանով պահանջելու հերքել իր պատիվը, արժանապատվությունը կամ բարի համբավն արատավորող տեղեկությունները (ցանկա-

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, ՀՀՊՏ 2010/28 (762). 23.06.10:

<sup>2</sup> Ի դեպ, Հայաստանի Հանրապետության Սարդու իրավունքների պաշտպան Կ. Անդրեասյանի դիմումի հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանը քննարկման առարկա դարձրեց Քաղ. օր. 1087.1 հոդվածի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը, բայց քանի որ դիմումում որևէ հիշատակում չկար Քաղ. օր. 19 հոդվածում կատարված փոփոխությունների մասին, ՀՀ Սահմանադրական դատարանը գտավ, որ հիշյալ հոդվածը ՀՀ Սահմանադրությանը չի հակասում: Նման որոշումը միանգամայն օրինաչափ է, քանի որ դիմողը, անտեսելով 1087.1 հոդվածի Քաղ. օր.-ում հայտնվելու հակասահմանադրական հիմքը (Քաղ. օր. 19 հ. կատարված փոփոխությունները), պահանջել էր որոշում կայացնել, ճիշտ է աղավաղված, բայց ինքնին հակասահմանադրական չհանդիսացող հետևանքի մասին:

<sup>3</sup> Ռուս փիլիսոփա Ա. Ա. Ջինովկի միտքը տես **Пучинский Б. И.** Коммерческое право России. Учебное пособие. М., 2000, էջ 10:

ցած տեղեկություն), եթե նման տեղեկություններ տարածած անձը չապացուցեր, որ դրանք համապատասխանում են իրականությանը, ապա նոր խմբագրությամբ նման իրավունք նա ձեռք է բերում միայն մինչև փոփոխությունների կատարումը հանցագործություն համարվող վիրավորանքի և գրապարտության դեպքում: Ստացվում է, որ եթե մարդուն անպարկեշտ ձևով վիրավորել են իր տան մեջ՝ սեփական երեխայի ներկայությամբ, նա իր արժանապատվությունը օրենքով պաշտպանել չի կարող: Կամ պետք է դիմի «վենդետայի», կամ, եթե ի վիճակի չէ, ամբողջ կյանքը ապրի պատվազրկված: Պատվազրկողն էլ կարող է ծանոթներին և անծանոթներին, անգամ հրապարակայնորեն հանգիստ տեղեկացնել իր «քաջագործության» մասին, և դա վիրավորանք չի համարվի, քանի որ հիմնված է ստույգ փաստի վրա (Քաղ. օր. 1087.1. հոդվ.):

Ասվածը միակ թերությունը չէ: Ինչպես վերը նշեցինք, կատարված փոփոխություններով աղավաղվել են իրավագիտության դասական հասկացությունները: Մասնավորապես՝ նոր խմբագրությամբ (Քաղ. օր. 1087.1 հոդվ. կետ 2) **քաղաքացիական օրենսգրքի իմաստով**՝ վիրավորանք է համարվում խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակով կատարած **հրապարակային արտահայտությունը**:

Նախ՝ մեզ համար անհասկանալի է, թե ինչպես կարող է նույն արարքը տարբեր օրենսգրքերում տարբեր բովանդակություն ունենալ:

Երկրորդ՝ վիրավորանքը վիրավորանք է, այն ունի նույն բնույթն ու բովանդակությունն անկախ այն բանից, թե որ օրենսգրքում կսահմանվի այդ հասկացությունը: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի 136 հոդվածում ամրագրված հասկացությունը փոփոխելու և վիրավորանքի էությունը աղճատելու անհրաժեշտությունը չկար:

Ըստ 2003 թվականին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված Քրեական օրենսգրքի 136 հոդվածի՝ *վիրավորանք էր համարվում ուրիշի պատիվն ու արժանապատվությունը անպարկեշտ ձևով ստորացնելը*: Ակներև է, որ «արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունը» և «անպարկեշտ ձևով ստորացնելը» համարժեք արարքներ չեն: Բացի դրանից, քրեական օրենսգրքում ձևակերպված հասկացությունից ակնհայտ բխում է, որ արարքը վիրավորանք ճանաչելու համար դրսևորման հրապարակայնությունը և արարքի կատարման եղանակը որևէ նշանակություն չունեն: Այն կարող է կատարվել ինչպես անձի ներկայությամբ, այնպես էլ բացակայությամբ, ինչպես հրապարակայնորեն, այնպես էլ բանասանքներով, կարող է դրսևորվել ինչպես անձի նկատմամբ վիրավորական արտահայտություններ թույլ տալով, այնպես էլ նույն բնույթի գործողություններ կատարելով<sup>4</sup>: Այսինքն՝ Քաղ. օր. 1087.1. հոդվածը ոչ միայն աղճատել է վիրավորանքի հասկացությունը, այլև անհարկի սահմանափակել է դրա դրսևորման և՛ ձևը, և՛ եղանակը: Արդյունքում ստացվում է հետևյալը: Քաղ. օր.-ում փոփոխություններ կատարելուց հե-

<sup>4</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք», Հատուկ մաս, չորրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով, Եր., 2009 էջ 233, «Энциклопедический юридический словарь». М., 1996, էջ 205:

տող (քանի որ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ Քրեական օրենսգրքի 136 հոդվածը) գույքային պատասխանատվության չենթարկվելու համար կարելի է զերծ մնալ հրապարակային արտահայտություններով անձին վիրավորելուց, բայց առանց պատասխանատվության ենթարկվելու վախի կարելի է անձին վիրավորել ոչ հրապարակայնորեն կամ հրապարակայնորեն կատարվող գործողություններով (անպարկեշտ ժեստերով, տուժողի երեսին թքելով, նրա հագուստը ցեխոտելով և այլն)<sup>5</sup>:

Նույնը վերաբերում է նաև զրպարտությանը: Ուրիշի պատիվն ու արժանապատվությունը նսենացնող կամ բարի համբավն արատավորող ակնհայտ սուտ տեղեկություններ տարածելը (Քր. օր. 135 հոդված) քաղաքացիական օրենսգրքի իմաստով դարձել է՝ «անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ հրապարակային ներկայացնելը, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը»:

Պարզապես անհասկանալի է, թե ինչու են «ակնհայտ սուտ տեղեկությունները» փոխարինվել «փաստացի տվյալներով», ինչու է «տարածելը», որը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ, փոխարինվել «հրապարակային ներկայացնելով»: Ի՞նչ հասկանալ «հրապարակային ներկայացնել» ասելով. գրություններ բաժանելը, տարբեր մարդկանց առանձին - առանձին հայտնելը ներկայացնել են, թե՞ տարածել: Երիցս արդարացի է Գ. Բեքմեզյանը, երբ գտնում է, որ հրապարակային ասելով պետք է հասկանալ այնպիսի արտահայտությունը, որը հասանելի է անորոշ թվով անձանց, այսինքն՝ կատարվել է զանգվածային լրատվության միջոցով, հրապարակային ելույթի ժամանակ. որպես հրապարակային կատարված արտահայտություն պետք է դիտել նաև որոշակի խումբ անձանց շրջանակում կատարված արտահայտությունը, որը ներկաների մոտ վիրավորում կամ զրպարտում է անձին<sup>6</sup>: Հետևաբար, այն դեպքերում, երբ զրպարտչական կամ վիրավորական տեղեկություններ պարունակում են կազմակերպությունից դուրս եկող փաստաթղթերը, ապա այդ փաստաթղթերը փոխարինելու կամ հետ կանչելու պահանջ դնելը անօգուտ է, իսկ պատիվն ու արժանապատվությունը այլ եղանակներով արատավորելը (բամբասելով, պաշտոնատար անձանց հասցեագրված բնութագրերով, հայտարարություններով, այդ թվում՝ բանավոր հաղորդելով մեկ անձի) ընդհանրապես իրավախախտում չի համարվում: Ավելին, ըստ Քաղ. օր. 1087.1. հոդվածի 5-րդ մասի 2 կետի՝ «Եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտացիությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները», ապա կազատվի զրպարտության համար պատասխանատվությունից, եթե նույնիսկ նրա կողմից հրապարակված փաստացի տվյալները չեն համապատասխանում ճշմարտությանը: Հոդվածի այս ոլորապտույտ ձևակերպման տակ մենք, գրում է Գ. Բեքմեզյանը, հասկանում ենք հետևյալը՝ զրպար-

<sup>5</sup> Տե՛ս Քրեական իրավունքի նշված դասագիրքը, էջ 234:

<sup>6</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք», Երրորդ մաս, Եր., 2011, էջ 61:

տության համար մեղադրվող սուբյեկտը կազատվի զրպարտության համար պատասխանատվությունից, և նրա կողմից հրապարակված փաստերը զրպարտություն չեն համարվի, եթե վերջինս, ունենալով փաստական տվյալներ, ցանկացել է ճշտել դրանք, սակայն չի կարողացել, մինչև ժամանակ համոզված լինելով, որ դրանք ճիշտ և իրականությանը համապատասխանող տվյալներ են, հրապարակել է՝ ամենևին էլ նպատակ չունենալով զրպարտել ինչ - որ մեկին, այլ միայն նպատակ ունենալով երրորդ անձանց հասանելի դարձնել այդ փաստերը<sup>7</sup>: Իհարկե, նշված «ոլորապտույտ ձևակերպումը» այդպես էլ պետք է հասկանալ, բայց դրանից արարքի շառժառիքը և հետևանքները չեն փոխվում: Այն անձը, ում պատիվը զրպարտիչը ինչ - ինչ պատճառներով ցանկանում էր արատավորել, կպատվագրվի, իսկ զրպարտիչը, «մեղայականով» ներկայանալով, կազատվի և՛ բարոյական, և՛ գույքային պատասխանատվությունից:

Սրանով 1087.1. հոդվածի թերությունները չեն ավարտվում: Այդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերից կարծես բխում է, որ անձը, ում պատիվն արատավորվել է, հրապարակայնորեն ներողություն խնդրելուց, դատարանի վճիռը կամ իր պատասխանը հրապարակելուց բացի, իրավունք ունի դատական կարգով պահանջելու դրամական փոխհատուցում, վիրավորանքի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով, իսկ զրպարտության դեպքում՝ 2000-ապատիկի չափով: Բայց դա միայն թվում է, որովհետև նույն հոդվածի 10-րդ կետը փոխհատուցում ստանալը կախվածության մեջ է դնում մինչև դատարան դիմելը հերքում պահանջելու կամ պատասխանը հրապարակելու հանգամանքից: Այսինքն՝ եթե արատավորվածը ցանկանում է նյութապես պատժել արատավորողին, նա պարտավոր է լռելյայն հանդուրժել իր արատավորված լինելը, մինչև դատարանի վճիռը օրինական ուժի մեջ մտնելը: Թե նման վերապահումն ինչով է պայմանավորված, անհնար է բացատրել: Հանրահայտ է, որ բարոյական վնասի փոխհատուցում պահանջելը չի բացառում արատավորող տեղեկությունների հերքում պահանջելը<sup>8</sup>: Եվ որևէ նշանակություն չունի պահանջների ներկայացման հաջորդականությունը:

Այդ նորարարության կապակցությամբ պարտավորված ենք զգում էքսկուրս կատարել միջնադար և հիշեցնել Մխիթար Գոշի Դատաստանագրքի «Լ» գլխի առաջին մասը՝ «Եթե մեկը կին առնի և նրան ատի, ստորությամբ բամբասելով, թե կույս չէր աղջիկը, թող կանանց ձեռքով քննության առնեն. և եթե այրը ստում է, խրատեն նրան զանձելով նրանից և տուգանեն նրան 100 դրամ արծաթով»<sup>9</sup>: Մնում է միայն ցավով արձանագրել, որ ՀՀ օրենսդիրը քսանմեկերորդ դարում տուժողներին զրկել է սուտ բամբասողներին կարգի հրավիրելու օրինական բոլոր միջոցներից:

Անհնարին է բացատրել նաև, թե ինչով է պայմանավորված 1087.1. հոդվածի 13-րդ կետի նորամուծությունը: Այդ կետը տուժողին պարտավորեցնում է իրավունքի պաշտպանության հայց ներկայացնել վիրավորան-

<sup>7</sup> Տե՛ս նույն դասագիրքը, էջ 62:

<sup>8</sup> Տե՛ս **Аветисян В. Д.** Гражданско-правовые и административные средства защиты личных неимущественных прав граждан. Ер., 2002, էջ 105-106:

<sup>9</sup> **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք, Եր. 2001 էջ 46:

քի կամ զրպարտության մասին իրեն հայտնի դառնալու պահից՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում: Հարկ ենք համարում նկատել, որ նման սահմանափակում նախատեսված չէր անգամ տոտալիտար ռեժիմում ընդունված ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգրքով<sup>10</sup>, այդպիսի սահմանափակում գոյություն չուներ նաև Հայաստանի Հանրապետության գործող քաղաքացիական օրենսգրքում: Ավելին, այլ երկրների դատական բարձրագույն ատյանները իրենց պարզաբանումներում հատուկ ընդգծում են, որ պատվի, արժանապատվության, գործարար հեղինակության պաշտպանության պահանջների վրա հայցային վաղեմություն չի տարածվում<sup>11</sup>:

Անձնական ոչ գույքային<sup>12</sup> իրավունքների պաշտպանությանն ուղղված պահանջների վրա վաղեմություն տարածելը ոչ միայն հակաիրավական, այլև հակաբարոյական է: Մարդուն ի ծնե պատկանող, անգամ մահվանից հետո պաշտպանվող (Քաղ. օր. 19 հոդվ. կետ 2), բացառիկ և բացարձակ իրավունքների պաշտպանության ցանկացած սահմանափակում հակաբարոյական է: Չի կարելի մարդուն առանց դատ ու դատարանի դատապարտել հավիտենական պատվազրկության միայն այն բանի համար, որ մեկ կամ վեց ամսվա ընթացքում իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը պաշտպանելու համար դատարան չի դիմել: Այդ իրավունքների բնույթն այնպիսին է, որ բացառում է իրավունքների իրականացման սահմանափակումը որևէ ժամանակամիջոցով<sup>13</sup>:

Ընդ որում, նշված նորանվանումներն անում է 1991 թ. Մարդու իրավունքների և ազատությունների հանրնդհանուր հռչակագիրն ընդունած երկրի օրենսդիրը՝ անտեսելով, որ հռչակագրի 12 հոդվածը նախատեսում է. «Ոչ ոք չի կարող ենթարկվել իր անձնական և ընտանեկան կյանքի կամայական միջամտության, իր պատվի ու հեղինակության դեմ ուղղված ոտնձգության: Ամեն մարդ այդպիսի միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքով պաշտպանվելու իրավունք ունի», իսկ 8 հոդվածը պետության պարտականությունն է համարում օրենքով մարդուն պաշտպանել ոչ միայն վիրավորանքից և զրպարտությունից, այլև պատվի ու հեղինակության անձեռնմխելիության դեմ ուղղված ցանկացած ոտնձգությունից<sup>14</sup>:

Մինչև աղավաղելը Քաղ. օր. 19 հոդվածում տրված էր ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի «Մարդու և ժողովուրդների իրավունքները» 217 A (iii) բանաձևի 8 և 12 հոդվածների պահանջներին համապատասխանող պարզ, ընդգրկուն և մեկնաբանություններ չպահանջող սահմանում, այն է. «Քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել իր պատիվը, ար-

<sup>10</sup> Տե՛ս Հայկական ՍՍՀ քաղաքացիական իրավունք, ուսումնական ձեռնարկ, հ. 1, Եր., 1978, էջ 228:

<sup>11</sup> Տե՛ս օրինակ՝ ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 18.08.1992 թ. թիվ 11 որոշումը:

<sup>12</sup> Օրենքով հայցային վաղեմություն կարելի է տարածել միայն գույքային հարաբերությունների հետ կապված՝ այլ ոչ նյութական բարիքների պաշտպանությանն ուղղված պահանջների վրա:

<sup>13</sup> Տե՛ս **Տ. Կ. Քարսեղյան**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, Եր., 2000, էջ 265:

<sup>14</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 217 A բանաձևը:

Ժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունների հերքում, եթե նման տեղեկություններ տարածած անձը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը»: Այդ սահմանումը տուժողին և դատարանին իրավունք էր տալիս արատավորող համարել ոչ միայն *պատիվն ու արժանապատվությունը անպարկեշտ ձևով ստորացնելը, անձի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալներ հրապարակային ներկայացնելը*, այլև քաղաքացու կամ իրավաբանական անձի կողմից գործող օրենսդրությունը խախտելու, անազնիվ արարք կատարելու, անձնական, հասարակական կամ քաղաքական կյանքում ոչ ճիշտ, ոչ բարոյական վարքագիծ դրսևորելու, արտադրատնտեսական և գործարարական գործունեությունում գործարարական էթիկայի կամ գործարար շրջանառության սովորույթների խախտման մասին այնպիսի պնդումները, որոնք կարող են նսեմացնել քաղաքացու պատիվն ու արժանապատվությունը կամ քաղաքացու կամ իրավաբանական անձի գործարար համբավը<sup>15</sup>: Որևէ նշանակություն չունենա՝ այդպիսի տեղեկությունները հրապարակվել են մամուլում, հաղորդվել հեռուստատեսությամբ և ռադիոյով, ցուցադրվել կինոթրոնիկալ ծրագրերում և զանգվածային տեղեկատվության այլ միջոցներում, տարածվել ինտերնետ ցանցով, հեռուստակոմունիկացիոն կապի այլ միջոցների օգտագործմամբ, շարադրվել են պաշտոնատար անձանց հասցեագրված բնութագրերում, հրապարակային ելույթներում, հայտարարություններում, թե բանավոր հաղորդվել են թեկուզ մեկ անձի:

Դժվար չէ նկատել, որ կատարված փոփոխություններով ցանկացել են «լուծել» (եթե դա կարելի է լուծում համարել) մասնակի խնդիր, այն է՝ ապաքրեականացնել քրեական օրենսգիրքը: Բայց այդ նպատակն իրագործելու համար Քաղ. օր. 19 հոդվածը փոփոխելու անհրաժեշտությունը չկար: *Պետք էր միայն սահմանել բարոյական վնաս պատճառողներին նյութական պատասխանատվության ենթարկելու, այսինքն՝ բարոյական վնասի հատուցման կառուցակարգ, և անձը իրավունք կունենար իր արժանապատվությունը պաշտպանել ինչպես վիրավորանքից և զրպարտությունից, այնպես էլ անձը նսեմացնող ցանկացած այլ տեղեկությունների տարածումից:*

Կատարված փոփոխությունները շատ հեռու են այն առաքելությունն իրականացնելուց, որը վերապահված է բարոյական վնասի հատուցման ինստիտուտին: Այլ երկրների փորձից ելնելով (Ֆրանսիա, Գերմանիա, Ռուսաստան)՝ կարելի է վստահորեն պնդել, որ առանց այդ ինստիտուտը օրենսդրորեն ամրագրելու խոսք չի կարող լինել ներդրողների, սպառողների, գործարարների և այլ սուբյեկտների ոչ գույքային իրավունքների լիարժեք պաշտպանության, ինչպես նաև ֆիրմային անվանման, ապրանքանիշի<sup>16</sup>, ստեղծագործական աշխատանքի արդյունքների անօրինական

<sup>15</sup> Տե՛ս **Серго А.** Деловое имя и деловая репутация // «Хозяйство и право», 2010, № 4, էջ 39:

<sup>16</sup> Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությանը կիրառելի են դրանց նկատմամբ (Սահմանադրության 42.1. հոդված):

օգտագործման, ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կիրառելու և այլ իրավախախտումների դեմ արդյունավետ պայքարի մասին:

Այդ խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող ոչ նյութական բարիքների դեմ կատարված ոտնձգությամբ կամ անձնական ոչ գույքային իրավունքների օգտագործումը խախտող գործողություններով (անգործությամբ) պատճառված հոգեկան կամ ֆիզիկական տառապանքի համար<sup>17</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նախատեսել բարոյական վնասի հատուցում և դրա կիրառումն ապահովող արարողակարգեր սահմանող նորմեր:

Անձին ոչ իրավաչափ գործողություններով վնաս պատճառելը (նյութական կամ բարոյական) իրավախախտում է՝ օբյեկտիվ իրավունքի նորմերին հակասող, քաղաքացիների, իրավաբանական անձանց սուբյեկտիվ իրավունքները, պետության շահերը վնասող, հանրորեն վտանգավոր, վնասաբեր գործողություն<sup>18</sup>, որի համար իրավախախտը պետք է ենթարկվի գույքային պատասխանատվության:

Բարոյական վնասը պատճառվում է անձին պատվազրկող, անվայելուչ ձևով մարդուն նվազ կարևոր ներկայացնող, անձի վարկը վնասող, նրան բարոյական տառապանքներ պատճառող արարքներով<sup>19</sup>: Արարքի ձևը, կատարման եղանակը որևէ նշանակություն չունեն: Կարևորն այն է, որ բարոյական վնաս պատճառողը գիտակցում է, որ իր արարքով նվաստացնում է տուժողին, նսենացնում է նրա հեղինակությունը, խաբխուում է սեփական անձի նկատմամբ ունեցած հարգանքը, նրան հանիրավի պատճառում է հոգեկան և ֆիզիկական տառապանքներ: Իրավախախտողը ցանկանում է տուժողի մեջ առաջացնել վախի, ամոթի, զայրույթի, հուսահատության, ստորացվածության, արհամարհվածության կամ այլ դրսևորումներով հոգեկան աշխարհը խաթարող տառապանքներ: Նա գիտակցում է, որ այդ տառապանքներն առաջացնելով բացասական հոգեբանական հակազդեցություն՝ սթրեսային կամ ապատիկ ապրումներ, վնասակար հետևանքներ են ունենալու անձի համար:

Բնական է, որ նման հոգեկան և ֆիզիկական տառապանքները ոչնչով, առավել ևս դրամական փոխհատուցմամբ չեն վերականգնվում: Բայց դա չի նշանակում, որ բարոյական վնասը չպետք է փոխհատուցվի: Նման մոտեցումը հատուկ էր խորհրդային օրենսդրությանը: Բարոյական վնասի հատուցում չնախատեսելը խորհրդային իրավագետները մեծ մասամբ արդարացնում էին այն հիմնավորմամբ, որ բարոյական վնասի փոխհատուցմամբ խորհրդային հասարակության մտածելակերպին և անձի նկատմամբ ունեցած բարձր հարգանքին ոչ համարժեք դրամական գնահատման են

<sup>17</sup> Բարոյական վնասի սահմանումը տվել է ՌԴ Գերագույն դատարանը՝ 1994 թ. դեկտեմբերի 20-ի «Բարոյական վնասի հատուցման վերաբերյալ օրենսդրության կիրառման որոշակի հարցեր» թիվ 10 որոշմամբ, տե՛ս «Пленумы Верховных судов по гражданским делам». Сборник. М., 2000, էջ 311:

<sup>18</sup> Տե՛ս **Գ. Ղարախանյան**, Բարոյական վնասի հատուցման հարցի շուրջ, // Իրավաբանական թերթ, 1992, թիվ 5:

<sup>19</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Եր., 2010, էջ 165:



ենթարկվում այնպիսի բարիքներ, ինչպիսիք են կյանքը, առողջությունը, պատիվը, ստեղծագործական նվաճումները և այլն<sup>20</sup>: Այլ հեղինակներ էլ, նկատի ունենալով, որ բարոյական վնասի չափը ստույգ հաշվարկել հնարավոր չէ, գտնում էին, որ բարոյական վնասի փոխհատուցում թույլատրելի կառաջացնի դրանով եկամուտ ստանալու ձգտում, և դատարանը միշտ չէ, որ կարող է դրան արժանիորեն դիմակայել<sup>21</sup>: Միևնույն ժամանակ, այդ նույն ժամանակաշրջանում կային նաև իրավագետներ, որոնք համարում էին, որ բարոյական վնաս պատճառելը իրավախախտում է՝ իսկ իրավախախտմամբ պատճառված ցանկացած վնաս պետք է փոխհատուցվի<sup>22</sup>:

Անկախացումից հետո հայ իրավագետների ջանքերով հաղթահարվեցին տոտալիտար ռեժիմի պայմաններում գերիշխող՝ բարոյական վնասի փոխհատուցման «բուրժուական բնույթի» վերաբերյալ թյուր պատկերացումները: Հայ քաղաքացիագետները, հիմք ունենալով այն իրողությունը, որ անձի իրավունքներն ու ազատությունները արժևորվեցին սահմանադրական մակարդակով (1995 թ. ընդունված ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվեց «յուրաքանչյուր անձի ... իր պատիվը և բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունքը»), առաջարկում էին Քաղաքացիական օրենսգրքում նախատեսել բարոյական վնասի հատուցում: Նրանց հետևողականության շնորհիվ 1997 թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքում կատարված լրացմամբ նախատեսվեց բարոյական վնասի հատուցում (Քաղ. օր. 7.1. հոդվ.): Այդ հոդվածով իրավախախտումից տուժողներին վերապահվեց իրենց իրավունքները լիարժեք պաշտպանելու, խախտված իրավունքները վերականգնելու հնարավորություն: Նման նվաճումից հետո թվում էր, թե անկախ Հայաստանի քաղաքացիական օրենսգրքին ընդունելիս ոչ միայն կամրագրվի բարոյական վնասի հատուցում պահանջելու իրավունքը, այլև կնախատեսվեն դրա արդյունավետ կիրառությունն ապահովող կառուցակարգեր: Բայց անհասկանալի պատճառներով ՀՀ 1998 թ. քաղաքացիական օրենսգրքին ընդունելիս ընդհանուր մասի նախագծից հանվեց «Բարոյական վնասի փոխհատուցումը» հոդվածը<sup>23</sup>, իսկ հետագայում մշակված օրենսգրքի հատուկ մասում չընդգրկեցին ԱՊՀ երկրների մոդելային քաղաքացիական օրենսգրքի բարոյական վնասի հատուցման կառուցակարգերը նախատեսող 1024, 1025, և ՌԴ քաղ. օր. 1099-1101 հոդվածները: Այսինքն՝ ժողովրդավարական Հայաստանի Հանրապետությունում, որի Սահմանադրությամբ մարդու արժանապատվությունը ճանաչվում է նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմքը, անձը զրկվեց իր բարի անունն ու համբավը արատավորողին նյութապես «պատժելու» հնարավորությունից: Թվում է, թե 2010 թ. ընդունված օրենքը լրացնում է այդ բացը, բայց իրականում այդ օ-

<sup>20</sup> Տե՛ս **Флейшиц Е. А.** Обязательство из причинения вреда и неосновательного обогащения. М., 1951, էջ 24:

<sup>21</sup> Տե՛ս **Варшавский К. М.** Обязательства, возникающие вследствие причинения другому вреда. М., 1992, էջ 43-44:

<sup>22</sup> Տե՛ս **Братусь С. Н.** Юридическая ответственность и законность. М., 1976, էջ 202, **Маленн Н. С.** О моральном вреде // «Советское государство и право», 1993, № 3, էջ 32:

<sup>23</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրք» (Ընդհանուր մաս), Նախագիծ 01. 02. 96 թ. խմբագրությամբ, հոդված 19, Եր., 1996, էջ 31-32:

րենքը, անտեսելով մասնավոր հարաբերությունների կարգավորման հիմնարար սկզբունքները, նախատեսում է ոչ թե բարոյական վնասի հատուցում, այլ սահմանափակ դեպքերում կիրառվող բարոյա - սոցիալական գործառույթ՝ անձի անձեռնմխելիության պահպանության, սոցիալական պաշտպանության գործառույթ<sup>24</sup> չկատարող վարչական տուգանք: Մինչդեռ մարդու իրավունքների լիարժեք պաշտպանությունն ապահովելու համար անհրաժեշտ էր Քաղ. օր.-ում նախատեսել բարոյական վնասի փոխհատուցում և դրա իրականացումն ապահովող քաղաքացիաիրավական արարողակարգեր:

Կասկածից վեր է, որ բարոյական վնաս պատճառողին նյութական պատասխանատվության ենթարկելը բարերար ազդեցություն կունենա տուժողի հոգեկան վիճակի վրա: Այն տուժողի համար կունենա ամոքիչ ազդեցություն և հնարավորություն կտա ինչ - որ չափով «հարթելու» իրավախախտման անշահավետ հետևանքները: Անկախ փոխհատուցման չափից, այդ պատասխանատվությունը արդարության հասնելու ակնկալիքով առաջացող հատուկ իրավահարաբերություն է, որի նպատակը ոչ այնքան փոխհատուցման ծավալն է, որքան իրավախախտին «պատժելը»: Բարոյական վնասի փոխհատուցման պարագայում առավել կարևոր է, որ իրավախախտը, ոչ միայն ներողություն խնդրելով կամ իր տարածածը հերքելով, այլև դրամական փոխհատուցման անշահավետ հետևանքները ճաշակելով, «քավի» իր մեղքը:

Պակաս կարևոր չէ նաև անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանության այդ եղանակի նախականիչ (պրեվենտիվ) գործառույթը: Դրամական փոխհատուցման սպառնալիքը յուրատիպ արգելք է այլ անձանց պատիվն ու արժանապատվությունն անպատիժ արատավորելու հակում ունեցողների համար: Բարոյական վնասի փոխհատուցման օրենսդրական ամրագրումը կարմատավորի ուրիշի ոչ նյութական բարիքների պահպանության նկատմամբ հոգատարություն ցուցաբերելու, օրինականությունը պահպանելու վարքագիծ:

Մեր խորին համոզմամբ, ինչպես ցանկացած մասնավոր հարաբերությունում, այնպես էլ բարոյական վնասի հատուցում պահանջելու դեպքում որպես փոխհատուցում պահանջվող գումարի չափը պետք է նշի տուժողը՝ հիմնավորելով, թե ուն կողմից, ինչ հանգամանքներում և ինչպիսի գործողության (անգործության) հետևանքով է իրեն պատճառվել ֆիզիկական կամ բարոյական տառապանքներ, ինչու են դրանք արտահայտվում: Իսկ անձի ֆիզիկական և բարոյական տառապանքները բարոյական վնաս պատճառելու փաստացի հանգամանքների և տուժողի անհատական առանձնահատկությունների հաշվառմամբ պետք է գնահատի դատարանը<sup>25</sup>:

Տուժողի տառապանքները գնահատելիս դատարանը պետք է հաշվի առնի նրա առողջական վիճակը, կյանքի պայմանները, նյութական դրությունը, հասարակական դիրքը, տարիքը և այլ անհատական առանձնա-

<sup>24</sup> Տե՛ս **Анисимов А. Л.** Честь, достоинство, деловая репутация: гражданско-правовая защита. М., 1994, էջ 57:

<sup>25</sup> Տե՛ս «Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации». Части 1, 2, 3, 4. М., 2009, էջ 972:

հատկություններ: Դատարանին նաև իրավունք պետք է վերապահել հաշվի առնելու վնաս պատճառողի գույքային դրությունը, նրա և տուժողի փոխկապվածության (փոխկախվածության) մակարդակը: Բարոյական վնասը պետք է հատուցվի անկախ տուժողին պատճառված նյութական վնասի հատուցումից:

Բարոյական վնաս պատճառելու համար փոխհատուցվող գումարի վերջնական չափը որոշելիս դատարանը, ղեկավարվելով բանականության ու արդարության պահանջներով<sup>26</sup>, մեր կարծիքով, պետք է հաշվի առնի հետևյալ գործոնները՝

1. իրավախախտի մեղքի աստիճանը,
2. տուժողի մեղքի աստիճանը,
3. տուժողի ֆիզիկական և բարոյական տառապանքների աստիճանը, դրանց հասարակական արժևորումը,
4. ֆիզիկական և բարոյական տառապանքների բնույթը,
5. տուժողի տարիքը, նրա առողջական վիճակը, կյանքի պայմանները, նյութական դրությունը,
6. վնաս պատճառողի գույքային դրությունը,
7. ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Հասկանալի է, որ գործնականում բարոյական վնասի չափը ստույգ հաշվարկել հնարավոր չէ: Բայց այդպիսի հաշվարկի անհրաժեշտությունը չկա, քանի որ բարոյական վնասի փոխհատուցման պարագայում համարժեքության հարց չի դրվում: Մեր կարծիքով, բարոյական վնասի փոխհատուցողական բնույթի մասին դատողություններ անելիս անհրաժեշտ է ելակետ ընդունել այն իրողությունը, որ իրավական պատասխանատվության միջոցով չէ, որ վնասները փոխհատուցվում են լրիվ ծավալով (օրինակ՝ բացառիկ տուժանքի, իրական վնասների գանձման և այլ դեպքում): Դրանից իրավական պատասխանատվության նշանակությունը չի փոխվում, այն չի կորցնում իր նախականիսի և ռեպրեսիվ բնույթը:

*Վերոգրյալը հիմք է տալիս եզրակացնելու, որ Քաղ. օր.-ի անձնական ոչ գույքային իրավունքների պաշտպանության ինստիտուտը հիմնարար կատարելագործման անհրաժեշտություն ունի: Առանց այդ ինստիտուտի կատարելագործման, առանց բարոյական վնասի փոխհատուցումը օրենսդրորեն ամրագրելու, անձի իրավունքների լիարժեք պաշտպանության մասին խոսք չի կարող լինել:*

**ТАРИЕЛ БАРСЕГЯН – Гражданско-правовая защита чести, достоинства и деловой репутации личности.** – В гражданском законодательстве институт защиты личных неимущественных прав требует существенного усовершенствования. Без этого, как и без законодательного закрепления возмещения морального ущерба, не может быть и речи о полной защите прав личности.

Анализ норм Гражданского кодекса РА даёт основания утверждать, что внесённые в него изменения не только ограничили конституционное право, но в определённых случаях личность, по сути, лишилась возможности защитить свои права законным путём.

<sup>26</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 972:

Согласно прежней редакции 19-й статьи Гражданского кодекса РА каждый гражданин имел право требовать по суду опровержения порочащих его честь, достоинство или деловую репутацию сведений, если распространивший такие сведения не докажет, что они соответствуют действительности. До внесения изменений приобретение таких прав было возможно только в случае оскорбления и клеветы, которые являлись преступлением.

Нетрудно заметить, что изменения, внесённые в ГК, преследовали цель решить частную задачу (если это можно считать решением), а именно декриминализовать деяния, порочащие честь, достоинство или деловую репутацию личности. Но для этого не нужно было изменять статью 19-ю ГК РА. Необходимо было решить вопрос о привлечении к материальной ответственности лица, причинившего моральный ущерб, то есть гражданин имел бы право защитить себя от оскорбления, клеветы и от любой другой информации, унижающей его достоинство.

**TARIEL BARSEGYAN – *Civil Law Protection of Person’s Honor, Dignity and Professional Reputation.*** – The institute of the protection of personal non-property rights needs substantial improvement in the civil legislation. No full protection of human rights can be provided without the improvement of this institute and legislative recognition of moral damage compensation.

The analysis of the norms of the Civil Code gives reason to assume that the changes taken place in the mentioned legislative act not only have restricted the constitutional right of protection of honor, dignity and professional reputation of a person, but in certain cases have actually deprived the person from the possibility of legal protection.

According to the previous edition of the 19th article of the Civil Code, every person had the right to demand refutation of the information discrediting his honor, dignity or professional reputation, unless the person who had published such information (any information – T.B.) does not prove that it is true. Prior to the changes which took place, a person could use such a right in cases of insult and libel, which were foreseen as crimes.

It is evident, that the changes were aimed to "solve" (if it can be considered as a solution) a particular problem, namely, to decriminalize criminal offences defaming honor, dignity and professional reputation of a person. . To achieve the mentioned goal, there was no need to change Article 19 of the Civil Code.

It was necessary to create a basis for bringing the person who caused moral damage to financial liability, thus providing a person with the right to protect his/her dignity both from insult and slander, as well as from any other information defaming his/her dignity.